բաւ դէպի արեւմուտք՝ բիւզանդական նահանգները նոքա հաստատուելով Փոքր Ասիայի կեդրոնական շրջաններում եւ Կիլիկիայի բարձունքների վերայ, իրենց հետ բերին մշակոյթային զեղարուեստի որոշ եւ բարձր աւանդներ: Հայրենիքի մէջ Հայերն ունէին զարգացման հասած ճարտարապետական եւ ձեռագրական բարձր արուեստ. հաստատուելով նոր երկրում, ենթակայ նոր պայմանների եւ շրջապատի յարաբերութեան, կարող էին նրանք փոփոխութեան ենթարկուել, բայց ոչ անհետանալ: Կազմակերպեալ եկեղեցին իւր հայրապետութեամբ այդ աւանդների պահապանն էր, բնականաբար, առանց աչքերը փակելու նոր պայմանների եւ ազդակների վերայ: Այդ նոր պայմաններն էին Բիւզանդիայի հետ աւելի սերտ առնչութիւնը, Խաչակիրների արշաւանքները, մահմետական ազգերի հետ անմիջական շփումը, Հայ թագաւորութեան ծաղկման հետ վաճառականական երթեւեկութիւնը դէպի արեւելք եւ դէպի արեւմուտք, որ անզգալի կերպով իրենց դրոշմն են թողնում Հայ կեանքի, հետեւապէս եւ արուեստի վերայ:

Եթէ մենք ի նկատի ունենանք Հայ ձեռագրական արուեստը մինչեւ ԺԱ. դարի վերջերը եւ մինչեւ իսկ ԺԲ. դարի կէսերը, կը տեսնենք, որ նորա բնոյթը տարբեր է, քան թէ այնուհետեւ երեւան եկող երեւոյթներն են կիլիկեան շրջանում: Մինչ այդ Հայ արուեստի բնոյթը արեւելեան է, համեմատ իւր դրացիների՝ Առաջաւոր Ասիայի ազգերի եւ Պարսկաստանի հետ ունեցած փոխազդեցութեան:

Հայ արքունիքը բարեկամական եւ խնամիական յարաբերութեան մէջ է բիւզանդական կայսերական կամ Խաչակիր պետութեանց տների հետ: Նրանք նստում, կանգնում, հագնւում են այլ կերպ, քան հայրենիքում եղած իշխաններն էին: Ներսէս Լամբրոնացին եւս ակնարկում է այդ մասին առ Լեւոն գրած թղթի մէջ եւ այդ իրապէս տեսնում ենք նրանց մանրանկարների վերայ: Հեթում Բ.-ի Ճաշոցի մանրանկարների մէջ նկատելի են Ֆրանսականի հետ, ինչպէս fleur de lie-ին, չինական կտորներից առնուած վիշապների կամ թռչունների պատկերներ: Եւ յիրաւի Դրազարկի դպրոցի հնագոյն ձեռագիրներից մէկը՝ Տիւրինգէնի Աւետարանը, ուսումնասիրուած նշանաւոր արուեստագէտ Strzygowski-ի կողմից, գրուած 1113 թուին, բայց արտագրուած 893 թուի օրինակից՝ «ի թագաւորութեան Հայոց Սմբատայ որդոյ Աշոտոյ Բագրատունոյ...», նկարագրդուած է բոլորովին արեւելեան ոճով, միանգամայն մօտ իւր մանրանկարչական մոտիւներով եւ յատկապէս զարդագրութեամբ ԺԱ.-ԺԳ. դարերի արեւելեան Հայաստանի ձեռագիրներին: Չենք կարող ասել, թէ զարդարանքն էլ արտանկարուած է 893 թուի օրինակից, բայց բուն հայրենիքի աւանդներով անկասկած: Մեզ յայտնի է Դրազարկի նոյն ժամանակի միջին երկաթագրով մի այլ աւետարան, որ առաջ սեպհականութիւն էր նախկին Բենիկ Վարդապետի ընտանիքի, այժմ Մ. Աթոռի մատենադարանում, թէեւ սակաւաթիւ զարդերով, դարձեալ բոլորովին արեւելեան է: Հռոմկլան համեմատաբար աւելի ուշ է հանդէս գալիս որպէս գրչութեան կեդրոն. Հայրապետական աթոռը նախ Ծովքումն էր, իսկ դորանից էլ առաջ Սեաւ լեռան Շուղրի անապատում կամ Կարմիր Վանքում կարճ ժամանակով: ԺԲ. դարի առաջին տասնամեակներում այնտեղ կրթութիւն ստացան Ստեփանոս Վարդապետի ձեռքի տակ այնպիսի հոյակապ եւ հայ մատենագրութեան պատմութեան մէջ նշանաւոր հանդիսացած անձնաւորութիւններ, որպիսիք են Գրիգոր Գ. Պահլաւունի, Ներսէս Շնորհալի եւ նրանց ուսումնակից Իգնատիոս եւ Սարգիս վարդապետները, մէկը Ղուկասի եւ միւսը Կաթուղիկեայց թղթերի մեկնիչ: Կաթուղիկոսական աթոռը Հռոմկլայում հաստատուեցաւ միայն 1150 թուականին, բայց բնականաբար իւր հետ բերելով արեւելեան աւանդութիւնները:

* * *

Մեզ յայտնի հնագոյն ձեռագիրը Հռոմկլայի, Գրիգոր Պահլաւունու հայրապետութեան ժամանակ՝ 1165/6 թուին մի մագաղաթեայ, երկաթագիր աւետարան է, Առաքել արքեպիսկոպոսի ստացմամբ, որի պատկերն էլ նկարուած է աւետարանից առաջ: Յիսուս նստած է բարձրաթիկունք աթոռի վերայ, աջով յունական օրհնութիւն է տալիս, ձախով բռնել է բաց աւետարան՝ «Ես եմ լոյս աշխարհի» խօսքերով: Նորա առաջ կանգնած է «Տր. Առաքեալ ստացաւ սորա»: Պատկերը զեղարուեստական անուանել չենք կարող, թէ այստեղ եւ թէ աւետարանիչներինը: Աւելի յաջող են խորանազարդերը, զարդագրերն ու լուսանցքի զարդերը, որոնցից, տարաբաղդաբար, նմոյշ տալ չենք